ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փ. 1/27
էլ. փոստ՝ antifakeam@gmail.com
Հեռ.՝ (+374 91) 57-27-18

№ 039-20 «11» փետրվարի 2020 թ.

Վայոց ձորի մարզպետ Արարատ Գրիգորյանին
(Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան 5,
էլ. փոստ՝ marzpet.vayotsdzor@mta.gov.am,
sonamargaryan@mail.ru
Հեռ.՝ (0281) 2-25-22)

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր
Աստղիկ Մաթևոսյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ և 42-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ տրամադրել Վայոց ձորի մարզպետարանի աշխատակիցներ Նարեկ Մարտիրոսյանի և Անի Մխիթարյանի վերաբերյալ հետևյալ տեղեկությունները.

1. Նշված անձինք ե՞րբ են աշխատանքի անցել Վայոց ձորի մարզպետարանում:
2. Ի՞նչ պաշտոն են զբաղեցնում:
3. Ի՞նչ իրավական հիմքով են աշխատանքի անցել (տրամադրել աշխատանքի անցման հրամանները):
4. Ի՞նչ նորմատիվ իրավական ակտի հիման վրա են զբաղեցնում իրենց պաշտոնները (տրամադրել նորմատիվ իրավական ակտի անվանումը, հոդվածը, մասը):

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ.
Մուտքի թիվ 1026

5. Որքա՞ն աշխատավարձ են ստանում (այդ թվում՝ բուն աշխատավարձ, լրավճարներ, պարգևավճարներ):

6. Որո՞նք են տվյալ աշխատակիցների պաշտոնային անձնագրի չափանիշները:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու սույն հարցումը ստանալուն պես իրազեկել այդ մասին, ինչպես նաև հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել և՛ նշված էլեկտրոնային փոստի հասցեով, և՛ թղթային տարբերակով՝ նշված հասցեով:

Կանխավ շնորհակալ եմ՝

«Անտիֆեյք.ամ» կայքի գլխավոր խմբագիր՝ **Ա. Մաթևոսյան**

«11» հոկտեմբեր 2020 թ.